ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3309-Ա « 02 » հուլիսի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N 929-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1. Երևանի քաղաքապետի 2025 թվականի մարտի 14-ի «Գնահատող հանձնաժողովներ կազմավորելու մասին» № 929-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

«1) Որոշման 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ «Կազմավորել Կոմիտասի անվան զբոսայգու և Դալմայի այգիների վերականգնման հայեցակարգի և նախագծային աշխատանքների ձեռքբերման միջազգային մրցույթի գնահատող հանձնաժողով և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:»:

2. Սույն որոշման կատարումը վերապահել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին:

3. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
02.07.2026 թ.
№ 3309-Ա որոշման

«Հավելված № 5
Երևանի քաղաքապետի
2025 թվականի մարտի 14-ի
№ 929-Ա որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ԶԲՈՍԱՅԳՈՒ ԵՎ ԴԱԼՄԱՅԻ ԱՅԳԻՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԵՎ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Անետա Բաբայան	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար (հանձնաժողովի նախագահ)
Սոնա Թևանյան	Երևանի քաղաքապետի խորհրդական
Սիրարփի Հայկազյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետ
Արմեն Բեգոյան	«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրեն
Վաչե Ջիհանյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի հատուկ ծրագրերի համակարգող
Արամ Պետրոսյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի Երևանի քաղաքային զարգացման ծրագրի համակարգող
Հռիփսիմե Նանագուլյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի Երևանի քաղաքային զարգացման ծրագրի իրականացման խմբի գլխավոր ինժեներ
Քրիստինե Սահակյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի բնապահպանական կառավարման ավագ մասնագետ

Կարինե Աբրահամյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի Երևանի քաղաքային զարգացման ծրագրի իրականացման խմբի գնումների մասնագետ (հանձնաժողովի քարտուղար, առանց քվեարկության իրավունքի)

»:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**